Վարկային տեղեկատվության և անձնական տվյալների Սուբյեկտի Համաձայնություն

Սույն համաձայնությունը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ) տրամադրող վարկային տեղեկատվության և անձնական տվյալների սուբյեկտը, այսուհետ՝Սուբյեկտ, սույնով տեղեկացվել է (նաև չի առարկում) և տալիս է համաձայնություն Բանկին ներքոգրյալի վերաբերյալ.

1) Բանկը կատարի հարցումներ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ (այսուհետ՝ Վարկային բյուրո) և ստանա Սուբյեկտի վարկային պատմության տեղեկատվությունը (Սուբյեկտի դրամական պարտավորությունների մասին տեղեկությունները, ինչպես նաև վարկային այլ տեղեկությունները) ստորև նշված որևէ նպատակով.
   ա/ վարկային դիմում/հայտ/ի ներկայացում և/կամ վարկի տրամադրում.
   բ/ վարկի երաշխավորի/համավարկառուի/ ներգրավում.
   գ/ գործող վարկի մոնիտորինգ,
   դ/ Բանկի այլ ծառայությունների առաջարկում և/կամ մատուցում,
   ե/ աշխատանքային հարաբերություններ:
2) Բանկը տրամադրի Վարկային բյուրոյին Բանկի նկատմամբ Սուբյեկտի դրամական պարտավորությունների մասին տեղեկությունները, ինչպես նաև վարկային այլ տեղեկությունները:
3) Բանկը կատարի հարցումներ պետական և/կամ ոչ պետական մարմինների ու ստանա Սուբյեկտին պատկանող գույքի (անշարժ, շարժական և այլ), գույքային իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ:
4) Սուբյեկտի հետ գործարար հարաբերություն հաստատելու և/կամ մեկանգամյա գործարք կատարելու համար Բանկը մշակի Սուբյեկտի անձնական տվյալները՝ Սուբյեկտի ինքնության ստուգման և նույնականացման գործընթացի ապահովման նպատակով.
5) Բանկը մշակի Սուբյեկտի հետևյալ անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան տվյալներ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, բնակության և հաշվառման հասցեի տվյալներ, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական շտեմարաններում առկա Սուբյեկտի անձնական այլ տվյալներ:
6) Բանկը կատարի Սուբյեկտի անձնական տվյալները հավաքելու, պահպանելու և/կամ օգտագործելու գործողություն կամ գործողությունների խումբ:
7) Բանկի կողմից Սուբյեկտին ծառայությունների մատուցման ապահովման համար և/կամ Բանկի իրավունքների պաշտպանության նպատակով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ Բանկը Սուբյեկտի անձնական տվյալները տրամադրի ՀՀ կենտրոնական բանկին, վարկային բյուրոներին, դատարաններին, իրավապահ մարմիններին, ՀՀ պետական մարմիններին:
8) Բանկը մշակի Սուբյեկտի անձնական տվյալները սույն համաձայնության 15)-րդ կետում նշված ժամկետով:
9) **Բանկի կողմից սույն համաձայնության 1)-ին կետի ա-բ/ ենթակետերով սահմանված նպատակներով Վարկային բյուրո կատարվող հարցումները Սուբյեկտի վարկային ամփոփ գնահատականի վրա ունենում են բացասական ազդեցություն և իջեցնում են Սուբյեկտի վարկային ամփոփ գնահատականը, իսկ այլ նպատակներով կատարվող հարցումները Սուբյեկտի վարկային ամփոփ գնահատականի վրա ազդեցություն չեն ունենում:**
10) Սույն համաձայնությամբ սահմանված յուրաքանչյուր նպատակով Բանկի կողմից Վարկային բյուրո հարցումները կատարվեն շաբաթական հինգ անգամից ոչ ավելի հաճախականությամբ, ընդ որում Սուբյեկտի հետ կնքված (կնքվելիք) պայմանագր/եր/ով հարցումները կարող են կատարվել մինչև այդ պայմանագր/եր/ով Սուբյեկտի պարտավորությունների ամբողջությամբ դադարումը:
11) Բանկի ստացած Սուբյեկտի Վարկային տեղեկատվությունը, գույքի և անձնական տվյալների մասին տեղեկությունները կարող են ունենալ ազդեցություն Բանկի կողմից որոշման կայացման համար.
12) «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկը տրամադրելու է կամ հնարավոր է տրամադրի Բանկի նկատմամբ Սուբյեկտի դրամական պարտավորությունների մասին տեղեկությունները, ինչպես նաև վարկային այլ տեղեկությունները Վարկային բյուրոյին և ՀՀ կենտրոնական բանկին.
13) Բանկում պահվող Սուբյեկտի անձնական տվյալներում սխալները կարող են ուղղվել Սուբյեկտի գրավոր դիմումով և/կամ համապատասխան հիմքերի ներկայացման/առկայության/ դեպքում:
14) Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն, առաջարկներ, գովազդներ ներկայացվի Սուբյեկտին:
15) Սույն համաձայնությունը գործելու է այն Բանկին տրամադրվելու օրվանից սկսած մինչև 20 տարի ժամկետով:
16) Սուբյեկտը կարող է հետ կանչել սույն համաձայնությունը՝ Բանկի ծառայություններից ամբողջությամբ հրաժարվելու մասին Բանկին գրավոր դիմում ներկայացնելու դեպքում և այն պայմանով, որ Սուբյեկտը չունի Բանկի նկատմամբ չկատարված պարտավորություններ և/կամ Բանկի հետ գործող պայմանագրեր:

Սուբյեկտը հաստատում է նաև, որ սույն համաձայնության բովանդակությունը, իմաստը և նշանակությունը Սուբյեկտին ամբողջությամբ հասկանալի է և Սուբյեկտը, առանց պարտադրանքի, միայն իր ցանկությամբ և իր կամքին համապատասխան, տալիս է սույն համաձայնությունը Բանկին:

Սուբյեկտի անուն, ազգանուն հայրանուն՝
Սուբյեկտի անձը հաստ. փաստաթղթի տվյալները՝
Սուբյեկտի բնակության/հաշվառման/հասցեն՝
Սուբյեկտի էլեկտրոնային հասցեն՝
Սուբյեկտի հեռախոսահամարը՝
Սուբյեկտի ստորագրությունը՝

«----» «----------» 20—թ